

ԿՏԱԿՆԵՐԻ ԳՐԱՆՑՄԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ

ԱՐՄԵՆ ՀԱՅԿՅԱՆՑ

Իմացաբանական նորություն չէ այն, որ պետաիրավական զարգացումները պետք է ուսումնասիրվեն և վերլուծվեն կոնկրետ պատմական ժամանակաշրջանի ձևաչափում: Միայն այդ դեպքում է հնարավոր առավելագույնս պատկերացնել պետաիրավական զարգացումների ուղղվածությունը, դրանց դրական և բացասական դրսևորումները:

Ժամանակակից պետաիրավական զարգացումներն ուղղորդող երևույթը գլոբալացումն է, որը հավակնում է դառնալու արդի դարաշրջանի հիմնական մարտահրավերը¹: Գլոբալացումը ունիվերսալի և պարտիկուլյարի անհաշտ պայքար է: Գլոբալացման պայմաններում ժամանակակից մշակույթներն ու սոցիումները առավել կան նվազ հաջողությամբ փորձում են ազգերի միջև սահմանների ու տարբերությունների վերացումը զուգակցել դրանցից յուրաքանչյուրի ինքնատիպության և ներքին ամբողջականության հետ²:

Գլոբալացման գործընթացներից դուրս չէ նաև իրավունքի բնագավառը: «Իրավունքի գլոբալացում» նշանակում է դրա ապագայնացում և հարմարեցում տեխնիկական ու տնտեսական գլոբալացման պահանջներին ունիվերսալ իրավանորմերի, իրավաբանական գործիքների ու կառուցակարգերի ստեղծման միջոցով: Իրավունքի գլոբալացումը ներառում է ոչ միայն միջազգային, այլև ազգային-իրավական ուղղվածություն ունեցող ոլորտներ: Ազգային-իրավական ուղղվածության ոլորտներից արագորեն գլոբալացվում է ժառանգական իրավունքը: Հայտնի է, որ ժառանգման իրավունքը սերտորեն կապված է ազգային-իրավական ուղղվածությամբ մեկ այլ ոլորտի՝ ընտանեկան իրավունքի հետ և ընտանեկան-ազգակցական կապերի մեջ գտնվող անձանց միջև սեփականության իրավունքի ձեռքբերման կամ դադարեցման եղանակ է: Ժառանգման իրավունքի բնագավառը ավանդաբար գտնվել է ազգային, պատմական, կրոնական գործոնների ազդեցության գոտում և պատմականորեն շատ անտարբեր է եղել օտարերկրյա կամ միջազգային ազդեցությունների հանդեպ: Արդի դարաշրջանում, սակայն, իրողություններն այլ են: Մարդու իրավունքների միջազգայնացման պայմաններում դժվար (եթե չասենք՝ նույնիսկ անհնար) կլինեք ժառանգման հարաբերությունները պահել ազգային-իրավական շրջանակներում: Ինչպես նշվում է Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիայի թիվ 1 Արձանագրության (20 մարտի 1952 թ., Փարիզ, Եվրոպայի խորհուրդ) 1-ին հոդվածում. «Յուրաքանչյուր ֆիզիկական անձ իրավունք ունի անարգել կերպով օգտվել իր

¹ Տե՛ս **Стрельников К. А.** Правовая глобализация: основные тенденции // "Юридический мир", 2008, № 10, էջ 25-32:

² Տե՛ս **Михайлова М. Д.** Некоторые проблемы глобализации // "Международное публичное и частное право", 2009, № 3, էջ 14-21:

սեփականությունից: Ոչ ոք չի կարող զրկվել իր սեփականությունից այլ կերպ, քան հասարակության շահերից ելնելով և այն պայմաններով, որոնք նախատեսվում են օրենքով և միջազգային իրավունքի սկզբունքներով»: «Օգտվել սեփականությունից» նշանակում է ոչ միայն սեփական գույքն օգտագործել, այլև տնօրինել, այսինքն՝ վերջինիս իրավաբանական ճակատագիրը որոշել, քանի որ օգտվելու ձև է նաև գույքի իրավաբանական ճակատագիրը որոշելու միջոցով օգուտներ ստանալը: Սեփական գույքը տնօրինելու եղանակներից մեկն էլ կտակի ձևով գույքն այլ անձանց փոխանցելն է: Ի դեպ, Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիայի թիվ 1 Արձանագրության 1-ին հոդվածը պետք է դիտարկել ոչ միայն կտակարարի, այլև ժառանգների դիրքերից, քանի որ նրանք ևս իրավունք ունեն օգտվելու որպես սեփականություն իրենց անցած գույքից: Ճիշտ է, Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիայի նշված հոդվածը վերաբերում է ավելի մեծ թվով դեպքերի, քան միայն ժառանգման իրավունքի ձևաչափում սեփականության իրավունքից օգտվելն է, սակայն խնդրո առարկա հարցի շրջանակներում անհրաժեշտ ենք համարում այդ Արձանագրությունը դիտարկել նեղ իրավական դիրքերից: Միջազգային-իրավական այս սկզբունքի ամրագրումը միևնույն ժամանակ ենթադրում է համապատասխան կառուցակարգերի մշակում, որոնք թույլ կտան մարդուն ազատորեն օգտվելու իր սեփականությունից, որտեղ էլ նա գտնվի: Սա արդեն իսկ նշանակում է սեփականության իրավունքի, ավելի կոնկրետ՝ նաև ժառանգման իրավունքի գլոբալացում: Ժառանգման իրավունքի գլոբալացման մասին է վկայում նաև ՀՀ Սահմանադրության 31 հոդվածի բովանդակությունը, համաձայն որի՝ «Յուրաքանչյուր ոք իրավունք ունի իր հայեցողությամբ տիրապետելու, օգտագործելու, տնօրինելու և կտակելու իր սեփականությունը»: Այստեղից հետևում է, որ յուրաքանչյուր ոք իրավունք ունի իր հայեցողությամբ տիրապետելու, օգտագործելու, տնօրինելու և կտակելու իր սեփականությունը որտեղ էլ որ գտնվեն ինքն ու իր սեփականությունը, և որ պետության քաղաքացիություն էլ որ նա ունենա: Ի զարգացումն կտակի միջոցով սեփականությունը տնօրինելու սահմանադրական նորմի՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1193 հոդվածում նշվում է. «Քաղաքացին իրավունք ունի իր հայեցողությամբ ցանկացած գույք կտակել ցանկացած անձի, ցանկացած ձևով որոշել ժառանգությունում ժառանգների բաժինները, զրկել ժառանգությունից ըստ օրենքի ժառանգներին, կտակում ներառել ժառանգության մասին սույն օրենսգրքի կանոններով նախատեսված այլ կարգադրություններ, վերացնել, փոփոխել կամ լրացնել կազմված կտակը: Քաղաքացին պարտավոր չէ որևէ մեկին տեղեկացնել կտակ անելու, այն փոփոխելու կամ վերացնելու մասին»: Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսդրության համաձայն՝ կտակ անելու, այն փոփոխելու կամ վերացնելու՝ քաղաքացու ազատությունն իրավաբանորեն սահմանափակված չէ Հայաստանի Հանրապետության տարածքով: Քաղաքացին կարող է կտակ կազմել Հայաստանում, այնուհետև որոշ ժամանակ անց՝ կազմված կտակը լրիվ կամ մասնակիորեն փոփոխել մեկ այլ պետությունում, իսկ էլի որոշ ժամանակ անց կարող է այն վերացնել երրորդ պետությունում: Օրենսդրական նման հնարավորությունների ընձե-

ռուճը լիովին համապատասխանում է մարդու իրավունքների միջազգային ճանաչմանը և պաշտպանությանը:

Պետք է ասել, որ օրենսդրորեն համապատասխան իրավունք նախատեսելն անհրաժեշտ, սակայն բավարար պայման չէ այդ իրավունքից օգտվելու համար: Դրա համար պետք է նախատեսել իրավունքների իրականացման կառուցակարգեր, առանց որոնց վերապահված իրավունքներն ուղղակի կվերածվեն «դատարկ հնարավորության»: Ինչ վերաբերում է տարբեր երկրներում կտակ կազմելու, այն փոփոխելու և վերացնելու անձի իրավունքին, ապա դրա համար անհրաժեշտ է նաև անձի մահվանից հետո այդ բոլոր կտակները, դրանց փոփոխությունները «հավաքելու, ի մի բերելու» օրենսդրական մեխանիզմներ նախատեսել: Երբ նման մեխանիզմներ չկան, տարբեր երկրներում կտակ կազմելու, այնուհետև այն փոփոխելու կամ վերացնելու դեպքում անձի կամահայտնությունը պարզապես կարող է նպատակին չծառայել, իսկ հնարավոր ժառանգն էլ կարող է չստանալ օրինական կարգով իրեն հասնող ժառանգությունը: Նշանակում է՝ համապատասխան մեխանիզմներ և կառուցակարգեր նախատեսելը միջազգային-իրավական պահանջ է, որին ակամջալուր պետք է լինեն բոլոր պետությունները:

Քաջ գիտակցելով սեփականության իրավունքից ազատորեն օգտվելու կարևորությունը և նշանակությունը՝ համաշխարհային հանրությունը փորձել է ձևավորել կտակների գրանցման միջազգային կառուցակարգ, ինչն էականորեն կնպաստի իրականացնելու սեփականատիրոջ հետմահու կամահայտնությունը և կապահովի ժառանգների սեփականության իրավունքը: Այդ կառուցակարգը սահմանվում է 1972 թ. Եվրոպայի խորհրդի շրջանակներում ընդունված **Կտակների գրանցման համակարգ հիմնադրելու մասին Բազելի կոնվենցիայով** (այսուհետ՝ Կոնվենցիա): 2010 թ. հունվարի 15-ի դրությամբ Կոնվենցիային միացել են 15 պետություններ, որոնցից 11-ը վավերացրել են այն (Կոնվենցիան վավերացրել են Բոսնիա և Հերցեգովինան, Կիպրոսը, Էստոնիան, Ֆրանսիան, Իտալիան, Լիտվան, Լյուքսեմբուրգը, Նիդեռլանդները, Պորտուգալիան, Իսպանիան, Թուրքիան), իսկ 4-ը՝ միայն ստորագրել (Կոնվենցիան միայն ստորագրել են Ավստրիան, Գերմանիան, Ուկրաինան, Մեծ Բրիտանիայի Միացյալ Թագավորությունը):

Հայաստանի Հանրապետությունն այս կոնվենցիային չի միացել: Դա նշանակում է, որ մեր օրենսդրությամբ քաղաքացին լիարժեք ապահովված չէ ցանկացած այլ երկրում իր սեփականությունից օգտվելու, այն կտակելու միջոցով տնօրինելու հնարավորությամբ: Իսկ թե որքանով կարող է այդ բացը լրացվել Բազելի Կոնվենցիային միանալով, կարող է պարզ դառնալ դրա բովանդակության վերլուծությունից:

Նախ նշենք, որ Եվրոպայի խորհրդի Խորհրդատվական ասամբլեան 1967 թ. հավանության արժանացրեց կտակների միջազգային գրանցման համակարգ ձևավորելու՝ Եվրոպայի խորհրդի Իրավական համագործակցության կոմիտեի ներկայացրած առաջարկը, որը ներառվեց Եվրոպայի խորհրդի միջկառավարական աշխատանքների 1968-69 թթ. ծրագրի մեջ, այնուհետև ձևավորվեց համապատասխան ենթահանձնաժողով՝ հետևյալ պետություններից ներկայացուցիչների կազմով՝ Բելգիա, Ավստրիա, Ֆրանսիա, ԳՖՀ, Իտալիա, Լյուքսեմբուրգ, Նիդեռլանդներ, Շվեյցարիա, Թուրքիա

և Միացյալ Թագավորություն³: Ենթահանձնաժողովի աշխատանքներին մասնակից դարձան նաև այնպիսի միջազգային կառույցներ, ինչպիսիք էին Միջազգային մասնավոր իրավունքի հարցերով Հաագայի կոնֆերանսը և Լատինական նոտարների միջազգային միությունը: Այս երկու կառույցների հետ համագործակցությունը կարևորվում էր նրանով, որ ենթադրվող համակարգը ձևավորելիս անհրաժեշտ էր հենվել հնարավորինս շատ երկրների իրավական փորձի վրա, միևնույն ժամանակ չպետք է տպավորություն ստեղծվեր, թե այդ համակարգը լինելու է «Եվրոպական» և վերաբերելու է միայն Եվրոպայի խորհրդի անդամ պետություններին: Հիշյալ մտավախությունը փարատելու հարցում հատկապես կարևորվում էր Լատինական նոտարների միջազգային միության ներգրավումը, որի անդամ էին Եվրոպայի խորհրդի ոչ անդամ պետություններ, ինչպես նաև պետություններ Լատինական Ամերիկայից: Կոնվենցիայի 13 հոդվածում ուղղակիորեն նշվում է, որ «Կոնվենցիան ուժի մեջ մտնելուց հետո Եվրոպայի խորհրդի Նախարարների խորհուրդը Կոնվենցիային միանալու համար կարող է հրավիրել նաև Եվրոպայի խորհրդի ոչ անդամ պետությունների»: Կոնվենցիայի ողջ առաքելությունը՝ անդամ պետությունների հետապնդած նպատակը, բացահայտվում է պրեամբուլայում, այն է՝ կտակարարին իր կտակը գրանցելու հնարավորություն ընձեռող համակարգի ձևավորումը, որի պայմաններում կնվազի կտակն անհայտ մնալու կամ ուշացումով հայտնաբերվելու ռիսկը, ավելի ոյուրին կդառնա կտակարարի մահվանից հետո արտասահմանում կազմված կտակների գոյությունը բացահայտելու հնարավորությունը: Այս նպատակին հետամուտ՝ Կոնվենցիան նախատեսել է դրան հասնելու իրավական անհրաժեշտ մեխանիզմներ, որոնք կարելի է պայմանականորեն բաժանել երկու խմբի. առաջին խումբն ուղղված է գրանցման համակարգի ձևավորմանը (**ինստիտուցիոնալ բնույթի մեխանիզմներ**), իսկ երկրորդ խումբը՝ համապատասխան տեղեկատվական բանկի ձևավորմանը (**ընթացակարգային մեխանիզմներ**):

Համաձայն Կոնվենցիայի 2-րդ հոդվածի՝ յուրաքանչյուր անդամ պետություն պարտավոր է հիմնադրել կամ մատնանշել այն մարմինը, որին հանձնարարված է ձևավորել սույն Կոնվենցիայով առաջադրվող համակարգը և տրամադրել պահանջվող տեղեկատվությունը: Կոնվենցիայի նախագիծը մշակող ենթահանձնաժողովն ի սկզբանե նպատակ է հետապնդել ձևավորելու կտակների միջազգային գրանցման համակարգ, այլ ոչ թե հիմնադրելու կտակների միջազգային գրանցման ինչ-որ միասնական կենտրոն⁴: Անդամ պետությունների համապատասխան ազգային մարմինների միջև կոոպերացիան ապահովվելու նպատակով Կոնվենցիայի 3 հոդվածի 2-րդ մասով սահմանվում է, որ անդամ պետությունները պետք է հաղորդակցվեն՝ Եվրոպայի խորհրդի գլխավոր քարտուղարին հայտնելով ազգային մարմնի անվանումը և հասցեն: Ի դեպ, անդամ պետություններն ազատ են ազգային մարմնի ընտրության հարցում. դա կարող է լինել ինչպես պետական մարմին, այնպես էլ որևէ մասնավոր կառույց: Օրինակ՝ Լիտվայում որպես ազգային մարմին է ընտրվել կենտրոնական հիպոթեքային գրասենյակը, Էստոնիայում՝ Տալլինի քաղաքային

³ Տե՛ս <http://conventions.coe.int/Treaty/en/Reports/Html/077.htm>

⁴ Տե՛ս <http://conventions.coe.int/Treaty/en/Reports/Html/077.htm>

դատարանի ժառանգման հարցերի ռեզիստրը, իսկ Նիդեռլանդներում՝ արդարադատության նախարարությունը⁵:

Համաձայն Կոնվենցիայի 3 հոդվածի 1-ին մասի a) և b) կետերի՝ ազգային մարմինները պարտավոր են անմիջականորեն, առանց որևէ միջնորդական օժանդակության, Կոնվենցիայի 8 հոդվածի պահանջների խստիվ պահպանմամբ համապատասխանաբար իրականացնել.

- Կոնվենցիայի 6 հոդվածի պահանջներից ելնելով՝ ստացած տեղեկատվության համակարգում,

- Կոնվենցիայի անդամ պետություններից ժառանգման վերաբերյալ հարցումների ընդունում և պատասխանների տրամադրում:

Կոնվենցիայի ընթացակարգային մեխանիզմների նպատակն է ապահովել անհրաժեշտ տեղեկատվության ամրագրումը՝ հետագայում ըստ անհրաժեշտության դրանք տրամադրելու նպատակով:

Համաձայն Կոնվենցիայի 4 հոդվածի՝ անդամ պետությունների ազգային մարմիններում գրանցման ենթակա են.

- նոտարների, անդամ պետության օրենսդրությամբ համապատասխան լիազորություն ունեցող պետական մարմինների, պաշտոնատար անձանց, ինչպես նաև օրենքով նախատեսված այլ անձանց կողմից վավերացված կտակները,

- առանց որևէ պաշտոնական վավերացման ձեռագիր կտակները, որոնք պահվում են նոտարների, անդամ պետության օրենսդրությամբ համապատասխան լիազորություն ունեցող պետական մարմինների, պաշտոնատար անձանց, ինչպես նաև օրենքով նախատեսված այլ անձանց մոտ:

Կոնվենցիայի 4 հոդվածի առնչությամբ անհրաժեշտ է նշել, որ այնտեղ լրիվ չի պարզաբանվում, թե հատկապես ինչ բովանդակություն ունի «կտակ» հասկացությունը: Կտակը այն միակողմ գործարքն է, որի օգնությամբ սեփականատերն օրենսդրորեն հնարավորություն ունի հետմահու տնօրինելու իր սեփականությունը: Եթե շատ երկրների օրենսդրությամբ կտակը միակ գործարքն է, որով կարելի է հետմահու տնօրինել սեփականությունը, ապա մի շարք պետությունների օրենսդրությամբ նմանատիպ գործարք է նաև ժառանգման պայմանագիրը (երկկողմանի գործարք)⁶: Քանի որ Կոնվենցիան որևէ սահմանափակում չունի ժառանգման պայմանագրերի մասով, ուստի բոլոր հիմքերը կան ենթադրելու, որ կոնվենցիոն «կտակ»-ը ներառում է և՛ կտակները, և՛ ժառանգման պայմանագրերը:

Ազգային մարմինը կտակները գրանցում է նոտարների, անդամ պետության օրենսդրությամբ համապատասխան լիազորություն ունեցող պետական մարմինների, պաշտոնատար անձանց, ինչպես նաև օրենքով նախատեսված այլ անձանց պահանջով: Ընդ որում, վերջիններս իրավունք ունեն նման պահանջով դիմել ոչ միայն կտակների գրանցման ազգային մարմնին, այլև միջնորդ կառույցների միջոցով կարող են դիմել անդամ պետությունների ազգային մարմիններին (Կոնվենցիայի 6 հոդվածի 2 -րդ մաս):

⁵ Տե՛ս <http://conventions.coe.int/Treaty/Commun/ListeDeclarations.asp?NT=077&CM=8&DF=01/02/2010&CL=RUS&VL=1>

⁶ Տե՛ս "Гражданское уложение Германии". М., 2006, էջ 556-561:

Կոնվենցիան հստակ նշում է, թե ինչպիսի տեղեկատվություն պետք է պարունակի յուրաքանչյուր գրանցում (Կոնվենցիայի 7 հոդված)։

- կտակարարի անունը և ազգանունը (ներառյալ մինչամուսնական ազգանունը),

- կտակարարի ծննդյան ամիսը, տարեթիվը և վայրը (եթե վայրը հնարավոր չէ հստակ նշել, ապա ծննդավայր պետությունը),

- հայտարարված հասցեն կամ դոմիցիլիան,

- գրանցման ենթակա ակտի բովանդակությունը և կատարման ամիսն ու տարեթիվը,

- նոտարի կամ հանրային իշխանությունը ներկայացնող այն անձի անունը և հասցեն, որը վավերացրել է ակտը, կամ որի մոտ պահվում է ակտը։

Գրանցման կարգը և պայմանները, ներառյալ գրանցման տևողությունը յուրաքանչյուր պետություն սահմանում է սեփական հայեցողությամբ. այստեղ չեն կարող հաշվի առնվել կտակարարի քաղաքացիության կամ դոմիցիլիայի հանգամանքները։ Կոնվենցիան, սակայն, սահմանում է ազգային մարմինների գործունեության գլխավոր սկզբունքը կամ պահանջը, այն է՝ կտակարարի կենդանության ողջ ընթացքում գրանցումը պետք է գաղտնի պահվի (**գրանցման գաղտնիության սկզբունք**)։ Միայն կտակարարի մահվանից հետո համապատասխան տեղեկատվությունը կարող է տրամադրվել ըստ անհրաժեշտության։ Գրանցման գաղտնիության պահանջը բնականաբար վերաբերում է միայն ազգային մարմիններին և բոլոր միջնորդական կառույցներին, սակայն ոչ կտակարարին, որի իրավունքն է սեփական հայեցողությամբ այդ մասին տեղեկացնել նախընտրելի անձանց։ Հատուկ ցանկանում ենք ընդգծել, որ գաղտնի է համարվում ոչ միայն կտակի բովանդակությունը, այլև դրա վերաբերյալ բոլոր համապատասխան գրանցումները ազգային մարմիններում⁷։

Եվ քանի որ ամրագրված է գաղտնիության սկզբունքը, ուստի Կոնվենցիան սահմանում է, թե ազգային մարմնից ովքեր և ինչպես կարող են տեղեկատվություն ստանալ։ Համաձայն Կոնվենցիայի 8 հոդվածի 2-րդ մասի՝ կտակարարի մահվանից հետո ցանկացած անձ իրավունք ունի ազգային մարմնից (մարմիններից) ստանալ Կոնվենցիայի 7 հոդվածով սահմանված տեղեկատվությունը՝ ներկայացնելով կտակարարի մահվան վկայականը կամ դրան հավաստեցված այլ փաստաթուղթ։ Վերջինս քաղաքացուն մահացած հայտարարելու վերաբերյալ դատարանի օրինական ուժի մեջ մտած վճիռն է⁸։ Կոնվենցիան չի պահանջում, որ համապատասխան անձինք ապացուցեն իրենց՝ կտակարարի հետ որոշակի հարաբերություններ (ազգակցական, ընտանեկան) կամ կտակի հետ կապված իրավական կամ այլ բնույթի շահեր ունենալու մասին։ Բավական է, որ այդ անձինք անհրաժեշտ փաստաթղթերի ներկայացմամբ կարողանան ապացուցել կտակարարի մահվան փաստը։ Ընդ որում, ազ-

⁷ Տե՛ս <http://conventions.coe.int/Treaty/en/Reports/Html/077.htm>

⁸ Ֆրանսիայի օրենսդրությամբ նման փաստաթուղթ կարող է լինել քաղաքացուն անհայտ բացակայող ճանաչելու վերաբերյալ դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճիռը, քանի որ Ֆրանսիայի օրենսդրությամբ՝ քաղաքացուն մահացած հայտարարելու ինստիտուտ չի նախատեսվում (ավելի մանրամասն տե՛ս "Гражданское и торговое право зарубежных государств". 1 том. Изд. 4-е., 2008, էջ 118-120)։

գային մարմինն ինքն է որոշում, թե ինչպիսի փաստաթղթեր կարող են բավարար լինել և ընդունվել կտակարարի մահվան փաստը ապացուցված համարելու համար:

Հայտնի է, որ առանձին երկրների օրենսդրությամբ թույլատրվում է, այսպես կոչված, համատեղ կտակների կազմումը⁹, թեև մի շարք երկրներում այդպիսիք կտրականապես արգելված են (Հայաստանում, Ռուսաստանում¹⁰, Ֆրանսիայում¹¹ և այլն): Չզտելով հեռու մնալ պետությունների միջև առկա նման կարգի օրենսդրական հակադրություններից և աշխատելով նմանատիպ պետություններին ևս մասնակից դարձնել կոնվենցիոն համակարգին՝ Կոնվենցիայի 10 հոդվածով սահմանվում է, որ «Կոնվենցիան որևէ կերպ չի շոշափում կտակների կամ այլ համանման ակտերի իրավաբանական վավերության պայմանները»: Եվ այս առանձնահատուկ տարբերակի կապակցությամբ Կոնվենցիան սահմանում է, որ կարիք չկա գրանցման գաղտնիությունը պահել մինչև բոլոր համակտակարարների մահը: Ազգային մարմինը համատեղ կտակների պարագայում պարտավոր է Կոնվենցիայի 7 հոդվածով սահմանված տեղեկատվությունը կտակային կամահայտնության մասով տրամադրել համակտակարարներից յուրաքանչյուրի մահվան դեպքում: Ինչպես նկատեցինք, կտակների միջազգային գրանցման համակարգ հիմնադրելու հարցում Կոնվենցիան նախանշում է հիմնական սկզբունքներն ու ուղղությունները՝ ընթացակարգային շատ հարցեր թողնելով ազգային օրենսդրությունների կարգավորմանը:

Ամփոփելով վերոշարադրյալը՝ պետք է նշել, որ կտակների միջազգային գրանցման բազելյան մոդելի ներդրումը Հայաստանի Հանրապետության պետաիրավական համակարգում ոչ միայն միջազգային-իրավական պահանջ է, այլև անհրաժեշտություն, որը կնպաստի հանրապետությունում մարդու հիմնական իրավունքների պաշտպանության առաջընթացին:

АРМЕН АЙКЯНЦ – Международная система регистрации завещаний. –

Глобализация – процесс, характеризующий современный мир, с нею связано развитие всех значимых государственно-правовых элементов. Глобализация права распространяется не только на международную, но и сугубо национальную сферу. Быстрыми темпами глобализуется, в частности, наследственное право, в первую очередь за счёт международного признания прав человека и их защиты. Одно из прав человека, гарантированных международно-правовыми актами, – это право свободно пользоваться собственностью, где бы ни находились и собственник, и его собственность. Оно предусматривает и распоряжение собственностью посредством завещания. Предусмотреть его в законодательстве

⁹ Վրաստանի օրենսդրությամբ համատեղ կտակներ կազմելը թույլատրվում է միայն անուսիններին (ավելի մանրամասն տես "Гражданский кодекс Грузии". СПб., 2002, էջ 670-671): Գերմանիայում թույլատրվում է ինչպես համատեղ կտակների, այնպես էլ փոխադարձ կտակների կազմումը (ավելի մանրամասն տես "Гражданское уложение Германии", էջ 554-555): Համատեղ կտակների ինստիտուտ նախատեսված է նաև Անգլիայում և ԱՄՆ-ում (ավելի մանրամասն տես "Гражданское и торговое право зарубежных государств". 1 том, էջ 577):

¹⁰ Տես "Гражданский кодекс Российской Федерации". Части первая, вторая, третья. М., 2006, էջ 365:

¹¹ Տես "Французский гражданский кодекс". СПб., 2004, էջ 754:

необходимо, но не достаточно. Нужны также механизмы реализации этого права, в противном случае оно превратится в умозрительную возможность.

Глубоко сознавая важность и значение права свободно пользоваться собственностью, мировое сообщество формирует систему международной регистрации завещаний, которая позволит реализовать волю собственника и обеспечит права собственности его наследникам. Этому посвящена Базельская конвенция 1972 года «О формировании системы международной регистрации завещаний». Конвенция устанавливает принципы построения системы международной регистрации завещаний, при этом решение многих вопросов процессуального характера оставляется национальным законодателям.

Армения к данной конвенции не присоединилась. Между тем внедрить в РА базельскую модель международной регистрации завещаний не только требование времени, это станет очередным шагом, способствующим защите прав человека в нашей стране.

ARMEN HAYKYANTS - *The International System of Will Registration.*- The contemporary world is characterized by the process of Globalization, in the light of which all kinds of significant governmental legal development take place. The globalization of law applies not only to international spheres, but also to the spheres of national-legal order. Due to the international legal recognition and human rights protection, the globalization of Inheritance law is picking up pace. One of the human rights granted by international-legal acts is the right of free use of property, no matter where the owner is and where the property is now. One of the ways of using property is drawing up a will. The legislative stipulation of the corresponding right is necessary, but not enough for the person to use the given right. For the implementation of the corresponding right, there is a need to develop certain mechanisms, without which the law will be just a void possibility.

Appreciating the importance and the meaning of the human right to have a free use of the property, the worldwide community tries to form the international registry of will, which will correctly reflect the post-mortem will of the owner and its realization, as well as will protect the property rights of the heirs. The formation of such a system is provided by Basel Convention 'On the development of the system of international will registrations' (1972).

The Republic of Armenia has not joined the mentioned convention. The Basel Convention of 1972 determines the principles and directions for forming the system of international registry of wills and leaves a number of procedural matters to be solved by national legislators.

The implementation of the Basel model of international registry of wills in the Republic of Armenia is not only an international-legal requirement. It will also promote human rights protection and guarantees in the country.